ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ԹԵՄԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

. . . . . Հայոց թեմի Գերապատիվ Առաջնորդին.

Գերաշնորհ Տ. . . . . ճոգեծին որդվո Մերում,

հարազատի Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի ողջույն Հայրապետական.

Խորհրդային Հայաստանի Կառավարությունը, Կեդրոնական Խորհրդային Իշխանության համաձայնությամբ, հայրենասիրական բնույթ կրող, խոշոր և մեծարժեք գործի է ձեռնարկել. նա բացել է ի սփյուռս ցրված Հայության առաջ իր երկրի դռները:

Ներգաղթը հայրենասիրական բնույթ է կրում, որովհետև օտարության մեջ, ձուլման քաղաքականության հետևանքով, հետզհետե նյութվող և անհացող Հայ ժողովուրդը ոչ միայն ազատվում է այդ վտանգից, այլ՝ Հայրենիք գալով, ավելացնում է ժողովրդի թիվը, նպաստելով նորա ֆիզիկական զորացման:

Ներգաղթը խոշոր և մեծարժեք գործ է, որովհետև Հայ ժողովուրդը գալիս է բոլոր ասպարեզներում վերելքի համբան բռնած կուլտուրապես խոշոր քայլերով հառաջադիմող և ազգային մշակույթը զարգացնող մի երկիր՝ իր Հայրենիքը, ուր ոչ միայն պիտի հաշակե արդեն պատրաստի Հայ կուլտուրան, այլև իր մասնակցությամբ պիտի նպաստե Հայ մշակույթի զարգացման, երկրի ու ժողովրդի ֆիզիկական զորացման և նորա կյանքի ու գոյության ապահովության:

Խորհրդային Հայաստանի Կառավարությունը ոչ միայն օտարության մեջ ցաք ու ցրիվ ընկած Հայ ժողովրդին թույլատրում է վերադառնալ իր Հայրենիքը, այլ և իր երկրում՝ Խորհրդային Հայաստանում կազմակերպում է ներգաղթը, որպեսզի Հայրենիք եկողները դժվարությունների չհանդիպեն, այլ՝ իրենց աշխատանքի շնորհիվ, հանգիստ ապրել կարողանան: Նա հազարավոր բնակարաններ է կառուցել ու կառուցում է այլ և այլ օդասուն վայրերում՝ հողագործ ու պարտիզպան ժողովրդի համար ապրելու և աշխատելու հնարավորություն ստեղծելով. իսկ արհեստավոր ժողովրդին և ինտելիգենցիային աշխատում է տեղավորել քաղաքներում որպեսզի համապատասխան աշխատանքներով ապահով լինեն:

Ժողովրդի ներգաղթի գործը խոշոր գործ է և պահանջում է ամենատեսակ ուժերի լարում: Ճշմարիտ է, Խորհրդային Հայաստանի Կառավարությունը իր ուժերից վեր ջանքեր է թափում ներգաղթի հարցը իդեալականորեն լուծելու համար, սակայն այդ՝ Հայ ժողովրդին իրեն, բոլոր դասակարգերով առած, չի ազատում իր բարոյական պարտքը կատարելու պարտականությունից, հատկապես նյութական խոշոր աջակցություն ցույց տալուցորի կազմակերպությունը Մենք հանձնարարում ենք Հայ Հոգևորականության:

Իմ սիրելի Հայ ժողովուրդ, Քե՛զ եմ դիմում, առանց դասակարգերի խտրության, դո՛ւ, որ քո պատմության ամբողջ ընթացքում սիրել ես քո Հայրենիքը. նվիրվել ես նորա զարգացման և արյուն թափել նորա անկախության համար, դո՛ւ, որ սիրել ես քո Ազգը. նորա պատվի և ազատության համար մարտիրոսացել, կասկածից դուրս է, որ այսօր, երբ Ազգդ ու Հայրենիքդ կարոտում են քո

աջակցության, դու չես գլանա fo բարոյական և նյութական աջակցությունը տրամադրել նորան, համոզված լինելով, որ այդ աջակցությունը պիտի նպաստե Ազգիդ և Հայրենիքիդ զորացման ու զարգացման:

Դերաշնորհ Տ. . . . Սրբազան, Քե՛զ եմ դիմում, և Քո միջոցով թեմիդ ամբողջ Հոգևորականության, որ ամեն ջանք գործ դրվի նյութական աջակցության գործը կատարելությամբ կազմակերպելու, որպեսզի ներգաղթի գաղափարական և սուրբ գործը, անգամ փոքրիկ չափով, չտուժե և հանցանքը ապագայում ձեր խղճի վերա չծանրանա:

Մենք խորապես համոզված ենք, որ այս խոշոր գործի հաջողությանը ամեն Հայ մարդ պարտք կհամարե նպաստել և՛ իր խելքով և՛ իր դրամով, առանց թերանալու իր բարոյական պարտքի հանդեպ և իր խղճի ձայնի առաջ:

Մեր առաջարկն է՝ շապ կարգով, տեղական պայմաններին համապատասխան, կազմակերպել նյութական աջակցության հարցը և գործի անցնել: և Ձեր ձեռնարկների ու նոցա ելքի մասին պարբերաբար իրազեկ անել Մեզ ի գիտություն, ի միամտություն և հաջակցություն: Մեր կողմից կառաջարկենք ի գործադրություն հետևյալ միջոցները.—

1. Տեղիդ քաղաքական իշխանության գիտությամբ Թեմիդ Սրեսփոխանական ժողովն ու կենտրոնական Վարչությունը Ձեր նախագահությամբ կարգում ենք ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, որ ժամանակավորապես ի պահ ընդունե գաղթող ընտանիքների անվաճառ մնացած անշարժ կալվածները, որպեսզի այդ հանգամանքը արգելք չհանդիսանա ներգաղթի հապաղման, և ի հաշիվ խնամակալության հանձնված վաճառելիք կալվածքի հնարավոր չափով ավանսավորել նոցա, ապագայում վաճառված կալվածքի դրամից գանձելու պայմանով:

2. Ավանս տալու համար՝ ժամանակավորապես թեմիդ բոլոր եկեղեցիների դրամը փոխարինաբար գանձել, վաճառվելիք կալվածների հաշվին գանձելու և վերադարձնելու պայմանով:

3. Տեղիդ հարուստներից կազմակերպել Հանձնաժողով, իրենց ներքին համաձայնությամբ պատկառելի դրամագլուխ գոյացնելու համար, որի նպատակը կլինի ավանսավորել գաղթողներին, ապագայում նոցա կալվածների վաճառումից գոյացած դրամից ետ ստանալու պայմանով:

4. Լայն հանգանակություն կազմակերպել, որից գոյացած դրամը անվերադարձ նպաստ տալ կարիքավորներին:

Ավարտելով խոսքս՝ մաղթում եմ Փրկչին, նեղյալների, վշտացյալների և հալածյալների միակ ճշմարիտ բարեկամին, ի սեր այս սուրբ գործի հաջողության, ուժ և եռանդ պարգևե Ձե՛զ և Ձեր աջակիցներին՝ հաջողությամբ պսակելու այս մեծ և ազնիվ գործը:

Մաղթում եմ Բարձրյալին, որ մեր բոլորիս գուրը շարժե, մեր հոգու ազնիվ զգացմունքները հուզե՝ արձագանք տալու այս սուրբ գործին:

Մաղթում եմ Տիրոջը, որ իր հովանին տարածե զգաթող ժողովրդի վերա և ներգաղթը հաջողությամբ պսակե:

Մաղթում եմ Բարձրյալին, որ գաղթականություն հանող պետությունների տրամադրությունը ի բարին ուղղե, որպեսզի Հայ պատմական ժողովրդի դարավոր տառապանքները գոնե մասամբ բուժվին:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

1 Հունիսի 1946 ամի

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ